2025

Իրավական նախաձեռնությունների կենտրոն

Գործունեության ամփոփում

2025 թվական

2025

Բովանդակություն

Կազմակերպության մասին՝ թվերով	2
Հակիրճ՝ առավել կարևոր հանդիպումների մասին	4
Իմաստալից ազդեցություն Կառավարության կողմից մշակված պետական ռազմավարությունների վրա	5
Ազատազրկված կանանց խնդիրների հասցեագրումը Կազմակերպության առաջնահերթություններից է	6
«Ներուժի բացահայտում. հզորացումը որպես դատապարտյալների վերաինտեգրման և կայուն ապագայի ուղի» ծրագիր	8
«Դիմադրության ձայներ. ճաղերից այն կողմ գտնվող կանանց պատմությունները» դրամաշնորհային ծրագիր	10
«Վերաինտեգրման ուղիներ. հզորացում սոցիալական ներառման միջոցով՝ հանուն կայուն ապագայի» դրամաշնորհային ծրագիր	14
«Կառուցելով գենդերազգայուն քրեակատարողական համակարգ Հայաստանում» դրամաշնորհային ծրագիր	18
Համագործակցության ամրապնդում լրատվամիջոցների հետ	20

Կազմակերպության մասին՝ թվերով

2025 թվականին (այսուհետ՝ հաշվետու տարի) «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) իրականացրել է 4 դրամաշնորհային ծրագիր, որոնք ուղղված են եղել ազատազրկված անձանց և պրոբացիայի ծառայության շահառուների սոցիալական ինտեգրմանը, նրանց տնտեսական հզորացմանը, ստեղծագործական ներուժի զարգացմանը, մասնագիտական և աշխատանքային հմտությունների բարելավմանը, ազատազրկված կանանց հետ տարվող աշխատանքներում մասնագիտական տարբեր խմբերի կողմից գենդերազգայուն մոտեցումների և սկզբունքների կիրառմանը:

Ծրագրերի շրջանակներում Կազմակերպությունը հասցեագրել է նաև քրեակատարողական համակարգի գնահատումը գենդերային զգայուն լինելու տեսանկյունից, քրեակատարողական համակարգում գենդերային զգայուն քաղաքականության մշակման և ներդրման ջատագովությունը:

Հաշվետու տարում Կազմակերպությունն աշխատել է 103 շահառուի հետ, որոնցից 77-ը՝ տղամարդ, 26-ը՝ կանայք:

Տղամարդկանցից 37-ն ազատազրկման, 2-ը՝ ցմահ ազատազրկման դատապարտված, իսկ 1-ը՝ կալանավորված անձինք են, որոնք պահվում են «Արմավիր» և «Սևան» ՔԿՀ-ներում: Մյուս 37-ից 35-ը պրոբացիայի ծառայության շահառուներ են, 2-ը՝ նրանց ընտանիքի անդամներ:

Կանանցից 1-ը պրոբացիայի ծառայության շահառու է, 2-ը՝ պրոբացիայի ծառայության շահառուների ընտանիքի անդամ: Մյուս 23-ից 2-ն ազատազրկման դատապարտված, իսկ 21-ը՝ կալանավորված կանայք են, որոնք պահվում են «Աբովյան» ՔԿՀ-ում:

Ծրագրային և ոչ ծրագրային նախաձեռնությունների շրջանակներում Կազմակերպության կողմից հաշվետու տարում կատարվել է 100-ից ավել այց «Աբովյան», «Արմավիր», «Նուբարաշեն» և «Սևան» ՔԿՀ-ներ: Կազմակերպությունը «Նուբարաշեն» և «Վանաձոր» ՔԿՀ-ներում պահվող ազատազրկված անձանցից ստացել է 6 ահազանգ, որոնք բոլորը վերաբերել են ահազանգն ուղարկած ազատազրկված անձանց առողջական վիճակին:

Կազմակերպության մասին՝ թվերով

Ստացված ահազանգերի և քրեակատարողական հիմնարկներ կատարված այցելությունների արդյունքում դուրս բերված խնդիրների շուրջ պաշտոնական պարզաբանումներ ստանալու նպատակով, ինչպես նաև ընթացիկ գործունեության համատեքստում Կազմակերպության կողմից պատասխանատու պետական մարմիններին ուղարկվել է մոտ 90 գրություն՝ ներառյալ հարցումներ, դատապարտյալների վերաբերյալ տեղեկանքներ և այլն:

Հաշվետու տարում Կազմակերպությունը մասնակցել է 30-ից ավել միջոցառումների՝ այդ թվում՝ կոնֆերանսներ, աշխատանքային քննարկումներ, հանդիպումներ, վերապատրաստման դասընթացներ և այլն:

Կազմակերպության նախագահ Նարե Հովհաննիսյանն Արդարադատության նախարարի 2024 թվականի օգոստոսի 20-ի թիվ 507-Ա հրամանով ընդգրկվել է քրեակատարողական ծառայողների ատեստավորման (երկրորդ փուլ) հանձնաժողովում: Հայաստանում Նիդեռլանդների Թագավորության, Նորվեգիայի Թագավորության և Չեխիայի Հանրապետության դեսպանատների, ինչպես նաև ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի պաշտոնական հրավերներով մասնակցել է համապատասխանաբար Թագավորի օրվա տոնակատարության, Նորվեգիայի Սահմանադրության օրվա, Չեխիայի ազգային տոնի և ՄԱԿ-ի հիմնադրման 80-ամյակի առթիվ կազմակերպված պաշտոնական ընդունելություններին:

Հաշվետու տարում Կազմակերպությունը պաշտոնապես միացել է Քրեակատարողական ոլորտի բարեփոխումների քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համաշխարհային դաշինքին, Կանանց աշխատանքային իրավունքների հարթակին, ընդգրկվել է Արդարադատության նախարարին կից հասարակական խորհրդի և Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր խոշտանգումների կանխարգելման խորհրդատվական խորհրդի կազմում:

Տարին նշանավորվել է Կազմակերպության և Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոնի միջև համագործակցության հուշագրի կնքմամբ, որի նպատակն է համատեղել ջանքերն ազատազրկված անձանց և պրոբացիայի շահառուների իրավագիտակցության բարձրացման, օրինապահ վարքագծի ձևավորման, հասարակություն վերաինտեգրման և նոր հանցագործությունների կանխման ուղղություններով:

Հակիրճ՝ առավել կարևոր հանդիպումների մասին

- Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման ծրագրի վերաբերյալ միջգերատեսչական հանդիպում
- ՔԿՀ-ներում անձնական խուզարկություններին, ինքնասպանությունների և ինքնավնասումների կանխարգելմանը վերաբերող ուղեցույցների ներկայացում
- «Քրեակատարողական առողջապահության բարելավում՝ տեղեկատվության արդյունավետ փոխանակման և համակարգման միջոցով» թեմայով քննարկում
- «Քրեակատարողական առողջապահության բարելավում՝ տեղեկատվության արդյունավետ փոխանակման և համակարգման միջոցով» թեմայով քննարկում
- Հանցավորության դեմ պայքարի ռազմավարական ծրագրի նախագծի վերաբերյալ քննարկում
- «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» լրամշակված օրենքի նախագծի քննարկում
- Գենդերային ուսումնասիրությունների և սեռականության 2-րդ հայկական կոնֆերանս
- Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր Խոշտանգումների կանխարգելման խորհրդատվական խորհրդի հերթական ընդլայնված նիստ
- Հայաստանում ընտանեկան բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման ծրագրի ներդրմանը և իրականացմանը նվիրված սեմինար-քննարկում

Իմաստալից ազդեցություն Կառավարության կողմից մշակված պետական ռազմավարությունների վրա

Կառավարությունը 2025 թվականի ապրիլի 23-ին ընդունել է ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028թթ. ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը, ինչը կարևոր առաջընթաց է երկրում գեդերային հավասարության և կանանց իրավունքների պաշտպանության խթանման տեսանկյունից: Գենդերային հավասարության քաղաքականության ապահովման 6 գերակայություն է սահմանվել, որոնք ուղղված են համապատասխան ոլորտներում կանանց և տղամարդկանց իրավունքների կիրարկման ու հնարավորությունների իրացման համար բարենպաստ և դրական միջավայրի ստեղծմանը՝ առաջնորդվելով նաև Հայաստանի ստանձնած պարտավորություններով: Առողջապահության ոլորտում հավասար հնարավորությունների ապահովման համատեքստում կարևորվել են նաև ազատությունից զրկված կանանց հիմնահարցերը: Մասնավորապես, նախատեսվում է.

- Ազատությունից զրկված կանանց շրջանում ապահովել վերարտադրողական առողջության ծառայությունների հասանելիությունը՝ հակաբեղմնավորիչ միջոցների (պահպանակներ և ներարգանդային պարույրներ) անվճար տրամադրման միջոցով:
- Ազատությունից զրկված կանանց շրջանում հավասար հիմունքներով իրականացնել առողջապահական կանխարգելիչ միջոցառումներ՝ սքրինինգային ծառայություններ:

[Ընդունվել է գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը]

Կառավարություն 2025 թվականի հունիսի 5-ի թիվ 736-Լ որոշմամբ հաստատվել է թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ոչ բժշկական նպատակներով գործածման և ապօրինի շրջանառության դեմ պայքարի ռազմավարությունը և դրանից բխող 2025-2027թթ. գործողությունների ծրագիրը: Ռազմավարության նախագիծն Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում հրապարակվել է 2024 թվականին՝ զուգահեռ անցնելով հանրային քննարկումների ծավալուն ու ներառական փուլ և լրամշակվելով քաղաքացիական հասարակության գործընկերների ու շահագրգիռ այլ պետական մարմինների հետ համագործակցության արդյունքում: Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների և առողջապահության բնագավառի փորձագետների հետ համատեղ ռազմավարության նախագծի վերաբերյալ դիտարկումներ և առաջարկություններ է ներկայացրել նաև Կազմակերպությունը: Կազմակերպության կողմից ներկայացված մի շարք առաջարկություններ տեղ են գտել ռազմավարության մեջ:

[Կազմակերպության կողմից ներկայացված մի շարք առաջարկություններ տեղ են գտել ռազմավարության մեջ]

Ազատազրկված կանանց խնդիրների հասցեագրումը Կազմակերպության առաջնահերթություններից է

2025 թվականի փետրվարի 13-ին Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում Կազմակերպության նախաձեռնությամբ տեղի է ունեցել «Կանանց ազատազրկման նկատմամբ գենդերազգայուն մոտեցումների կիրառման անհրաժեշտությունը» թեմայով քննարկում: Իր ձևաչափով հանդիպումն աննախադեպ էր և նպատակ ուներ քննարկել Կազմակերպության կողմից «Աբովյան» ՔԿՀ-ում արձանագրված խնդիրները, ազատազրկված կանանց վիճակի բարելավման վերաբերյալ առաջարկությունները և հնարավոր լուծումները:

«Կանանց ազատազրկման նկատմամբ գենդերազգայուն մոտեցումների կիրառման անհրաժեշտությունը». Քննարկում ՔԿԾ-ում



Հայաստանում կանանց հիմնադրամի կողմից թողարկվող Հայաստանի ժամանակակից աշխատավորուհի թերթի երկրորդ համարում տեղ է գտել Կազմակերպության նախագահ Նարե Հովհաննիսյանի հեղինակած հոդվածը, որն անդրադառնում է ազատազրկված կանանց սեռական և վերարտադրողական առողջության խնդիրներին:

«Կանանց սեռական և վերարտադրողական առողջության խնդիրները՝ ճաղերի հետևում». Հոդված

Ազատազրկված կանանց խնդիրների հասցեագրումը Կազմակերպության առաջնահերթություններից է



«Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի նախաձեռնությամբ 2017 թվականին ստեղծված «Վերարտադրողական առողջության և իրավունքի հարցերով զբաղվող ցանցի» անդամների կողմից մշակվել է «Վերարտադրողական առողջության և իրավունքի հասանելիությունը ՀՀ-ում. կանանց տարբեր խմբերի փորձառությունը վերարտադրողական իրավունքների իրացման գործընթացում» թեմայով զեկույց:

Որպես ցանցի անդամ՝ Կազմակերպության նախագահ, քրեակատարողական ոլորտի փորձագետ և հետազոտող Նարե Հովհաննիսյանը ներկայացրել է կալանավորված և դատապարտված կանանց վերարտադրողական իրավունքների իրացման խոչընդոտները Հայաստանում (էջեր 53-64):

«Կալանավորված և դատապարտված կանանց վերարտադրողական իրավունքների իրացումը Հայաստանում». Զեկույց

2025թ. նոյեմբերի 19-ին Կազմակերպության նախագահ Նարե Հովհաննիսյանը բանախոսությամբ է հանդես եկել Հայաստանի Եվրոպական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում: Նա ներկայացրել է ազատազրկված կանանց ամենասուր խնդիրները քրեակատարողական համակարգում՝ շեշտադրելով օրենսդրության և քաղաքականության փաստաթղթերի բացերը, ինչպես նաև համակարգային թերությունները:

Բանախոսության ավարտին Ն. Հովհաննիսյանը ներկայացրել է նաև անհրաժեշտ փոփոխությունների վերաբերյալ Կազմակերպության դիրքորոշումը և առաջարկվող ռազմավարական լուծումները:

Նարե Հովհաննիսյանը հյուրընկալվել է Հայաստանի Եվրոպական համալսարանում

«Ներուժի բացահայտում. հզորացումը որպես դատապարտյալների վերաինտեգրման և կայուն ապագայի ուղի» դրամաշնորհային ծրագիր

2025 թվականին Կազմակերպությունը Ֆինլանդիայի զարգացման համագործակցության ֆոնդերի աջակցությամբ իրականացրել է «Ներուժի բացահայտում. հզորացումը որպես դատապարտյալների վերաինտեգրման և կայուն ապագայի ուղի» դրամաշնորհային ծրագիրը, որի նպատակն էր աջակցել դատապարտյալների վերաինտեգրմանը և բացել նոր հնարավորությունների դռներ նրանց առաջ:

Ծրագիրն իրականացվել է քրեակատարողական 3 հիմնարկում՝ «Աբովյան», «Արմավիր» և «Սևան»: Բոլոր 3 հիմնարկներում կազմակերպվել են մասնակից ազատազրկված անձանց սոցիալական հմտությունների և աշխատանքային պատրաստվածությանն ուղղված դասընթացներ: Սոցիալական հմտությունների զարգացման համատեքստում կարևորվել են հետևյալ թեմաները՝ «Արդյունավետ հաղորդակցություն», «Կոնֆլիկտների կառավարում», «Որոշումների կայացում», «Թիմի կառուցում»: Աշխատանքային պատրաստվածության համատեքստում կարևորվել են հետևյալ թեմաները՝ «Իրավական հմտությունների զարգացում», «Մարկետինգային և գնագոյացման հմտությունների զարգացում», «Ռեզյումեի կազմում», «Աշխատանքի հարցազրույց»: Մասնագիտական հմտությունների զարգացման համատեքստում «Աբովյան» ՔԿՀ-ում անցկացվել են ուլունքագործության և հելունագործության, «Արմավիր» ՔԿՀ-ում՝ գրաֆիկական դիզայնի, իսկ «Սևան» ՔԿՀ-ում՝ կավագործության դասընթացներ: «Աբովյան» ՔԿՀ-ում ծրագրին մասնակցել է 16, «Արմավիր» ՔԿՀ-ում՝ 22, իսկ «Սևան» ՔԿՀ-ում՝ 18 անձ: Առավել պարտաճանաչ և ակտիվ մասնակցություն ունեցած մասնակիցներին Կազմակերպության կողմից տրվել են վկայականներ:

- 2025 թվականին Կազմակերպությունն աշխատել է ազատազրկված կանանց 28 տոկոսի հետ, որոնց 90 տոկոսը եղել են կալանավորված
- «Արմավիր» և «Սևան» ՔԿՀ-ներում ամփոփել ենք դրամաշնորհային ծրագրի դասընթացների փուլը

«Ներուժի բացահայտում. հզորացումը որպես դատապարտյալների վերաինտեգրման և կայուն ապագայի ուղի» դրամաշնորհային ծրագիր

Հայաստան կատարած այցի շրջանակներում 2025 թվականի սեպտեմբերի 15-ին «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ է այցելել Հարավային Կովկասում Ֆինլանդիայի դեսպանի կցորդ Աննա Ազկուի Սանչեսը: Նա Կազմակերպության նախագահ Նարե Հովհաննիսյանի հետ հանդիպել է ծրագրի մասնակից կանանց, ծանոթացել նրանց ձեռքբերումներին և լսել անձնական փորձառություններն ու պատմությունները: Հանդիպման ընթացքում քննարկվել են ծրագրի ընթացքն ու դրական փոփոխությունները, ինչպես նաև մասնակից կանանց առաջարկները՝ վերասոցիալականացման և ապագա ծրագրերի իրականացման ուղղությամբ:

Այցը ևս մեկ անգամ ընդգծել է կանանց հզորացման և վերաինտեգրման հարցերի կարևորությունը միջազգային օրակարգում՝ խթանելով նոր մոտեցումների մշակումն ու կիրառումը՝ դատապարտյալ կանանց սոցիալական ներառման և կայուն ապագայի ապահովման նպատակով:

«Դիմադրության ձայներ. ճաղերից այն կողմ գտնվող կանանց պատմությունները» դրամաշնորհային ծրագիր

2025 թվականին Կազմակերպությունը Չեխիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարության «Անցումային առաջխաղացում» ծրագրի ֆինանսական աջակցությամբ իրականացրել է «Դիմադրության ձայներ. ճաղերից այն կողմ գտնվող կանանց պատմությունները» դրամաշնորհային ծրագիրը, որի նպատակն էր փոխել հասարակության ընկալումներն ազատազրկված կանանց նկատմամբ, նրանց ձայները լսելի դարձնել ինչպես հանրությանը, այնպես էլ քրեական արդարադատության մարմիններին՝ նպաստելով ապրումակցման, զգայունության և փոխըմբռնման միջավայրի ձևավորմանը:

Ծրագրի շրջանակում կազմակերպությունն աշխատել է 16 կնոջ հետ, որոնցից 3-ը դատապարտյալ էին, իսկ 13-ը՝ կալանավորված: Վերջիններից 3-ը ծրագրի ընթացքում ազատ են արձակվել խափանման միջոցի փոփոխման արդյունքում: Իրենց պատմությունները ներկայացրել և վկայականներ ու հոնորարներ են ստացել 13 կանայք:

Պատմությունների հավաքագրմանը նախորդել են անհատական և խմբային հանդիպումներ, որոնք անցկացրել են հոգեբաններ, լրագրողներ, մեդիա փորձագետներ և գրականության ոլորտի մասնագետներ: Դրանք ներառել են ինքնազարգացման, հույզերի ճանաչման, հուզական բարեկեցության, անձնային աճի, դրական ինքնընկալման, գրավոր ու բանավոր խոսքի հմտությունների զարգացման թեմաներ: Հանդիպումները զուգորդվել են քննարկումներով, դերային խաղերով և գործնական վարժություններով: Այս գործընթացը միաժամանակ ունեցել է թերապևտիկ նշանակություն՝ օգնելով կանանց հաղթահարել ազատազրկման փորձառությունը և ներքին համարձակություն տալով բարձրաձայնելու իրենց պատմությունները:

Ծրագիրը նպաստել է նաև կանանց ֆինանսական վիճակի կայունացմանը: Որոշ կանայք չունեն այցելող կամ հանձնուք բերող հարազատներ, ինչի հետևանքով բախվում են նյութական և կենցաղային դժվարությունների: Այդ կանանց սիմվոլիկ վարձատրություն է տրվել, ինչի օգնությամբ նրանք կարողացել են ձեռք բերել ամենօրյա անհրաժեշտ իրեր, հոգալ փոքր կենցաղային ծախսերը և զգալ օրինական եկամուտի բերկրանքը:

«Դիմադրության ձայներ. ճաղերից այն կողմ գտնվող կանանց պատմությունները» դրամաշնորհային ծրագիր

Ծրագիրը նշանավորվել է «Աբովյան» ՔԿՀ կատարված մի շարք կարևոր այցելություններով, որոնք նպաստել են ծրագրի մասնակից կանանց, որոշում կայացնող պաշտոնյաների և Հայաստանում Չեխիայի Հանրապետության դեսպանատան ներկայացուցիչների միջև անմիջական երկխոսությանը՝ նախադրյալներ ստեղծելով, որպեսզի հիմնարկի մշակութային և կրթական կյանքը դառնա ավելի բազմազան, իսկ լուծման կարիք ունեցող խնդիրներն արժանի ուշադրություն ստանան.

- ✓ 2025թ. ապրիլի 23-ին «Աբովյան» ՔԿՀ են այցելել Հայաստանում Չեխիայի Հանրապետության փոխդեսպան Սաբինա Նովակովան և դեսպանատան ներկայացուցիչ Արարատ Սահակյանը և մասնակցել ծրագրով նախատեսված դասընթացներին:

  [Ազատազրկված կանայք ունեն գրավոր խոսքի կառուցման հիմնարար գիտելիքներ]

- ✓ 2025թ. հունիսի 4-ին հիմնարկ են այցելել Հայաստանում Չեխիայի Հանրապետության դեսպան Պետր Պիրունչիկը, փոխդեսպան Սաբինա Նովակովան, հյուպատոս Տոմաշ Մալեկը և դեսպանատան ներկայացուցիչ Սիրանուշ Հակոբյանը: Նրանց ուղեկցել են ՀՀ արդարադատության փոխնախարարը, Քրեակատարողական ծառայության ղեկավար կազմը և այլ պաշտոնյաներ: Հյուրերը ներկա են եղել ծրագրով նախատեսված դասընթացին, հարց ու պատասխանի ձևաչափով շփվել ազատազրկված կանանց հետ, պատասխանել նրանց հուզող հարցերին, ծանոթացել ծրագրի ընթացքին, նպատակներին և արձանագրված արդյունքներին: Այնուհետև շրջայց են կատարել «Աբովյան» ՔԿՀ-ում՝ ծանոթանալով ազատազրկված կանանց կենցաղային պայմաններին և վերասոցիալականացման հնարավորություններին:

  [Հայաստանում Չեխիայի դեսպանը, հյուրընկալվել է «Դիմադրության ձայներ. ճաղերից այն կողմ գտնվող կանանց պատմությունները» դրամաշնորհային ծրագրին]

- ✓ 2025թ. սեպտեմբերի 15-ին հիմնարկ են այցելել Սաբինա Նովակովան և դեսպանատան ներկայացուցիչներ Արարատ Սահակյանը և Ադամ Պեշոուտը: Հյուրերը հանդիպել են ծրագրի մասնակից կանանց հետ: Այցի շրջանակում գրքեր են նվիրաբերվել հիմնարկի գրադարանին: Փոխդեսպանը շեշտել է, որ գրքերի նվիրատվության գաղափարը ծնվել է հենց կանանց պատմությունները կարդալուց հետո: Կանանցից շատերը նշել են, որ իրենց առօրյայի կարևոր մասը ընթերցանությունն է, և իրենք մշտապես նոր գրքերի կարիք են ունենում:

  [Հայաստանում Չեխիայի Հանրապետության փոխդեսպան Սաբինա Նովակովան այցելել է ազատազրկված կանանց]

«Դիմադրության ձայներ. ճաղերից այն կողմ գտնվող կանանց պատմությունները» դրամաշնորհային ծրագիր



Կանանց կողմից ներկայացված պատմություններն ամփոփվել են «Հը՞, մամ, ինչպե՞ս է դրախտում» խորագրով ժողովածուում, որն ազատազրկման փորձառություն ունեցող կանանց պատմությունները նմանատիպ ձևաչափով ներկայացնելու առաջին փորձն է Հայաստանում:

Այն ներառել է ներածական խոսքեր Հայաստանում Չեխիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Պետր Պիրունչիկի և Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանի կողմից՝ բարձրացնելով պատմությունների արժանահավատությունն ու կարևորությունը:

«Հը՞, մամ, ինչպե՞ս է դրախտում». Ազատազրկված կանանց պատմությունների ժողովածու

Ժողովածուի շնորհանդեսը տեղի է ունեցել 2025 թվականի սեպտեմբերի 4-ին՝ համախմբելով ավելի քան 60 ներկայացուցիչներ դիվանագիտական առաքելություններից, պետական մարմիններից, տեղական և միջազգային կազմակերպություններից, լրատվամիջոցներից և այլ ոլորտներից: Ներկա էին Հայաստանում Չեխիայի Հանրապետության, Կանադայի, Նիդերլանդների դեսպանները և նշված դեսպանատների ներկայացուցիչներ, ներկայացուցիչներ Հայաստանում Եվրոպական միության պատվիրակությունից, Եվրոպայի խորհրդի գրասենյակից, Ռաուլ Վալենբերգի ինստիտուտի Երևանի գրասենյակից, Մարդու իրավունքների պաշտպանը, Արդարադատության փոխնախարարը, բարձրաստիճան պաշտոնյաներ և ներկայացուցիչներ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից, Արդարադատության նախարարությունից, Քրեակատարողական և Պրոբացիայի ծառայությունների կենտրոնական մարմիններից, «Աբովյան» ՔԿՀ-ից, «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ից, Քննչական կոմիտեից, Դատական դեպարտամենտից, հյուրեր հասարակական կազմակերպություններից, լրատվամիջոցներից, մշակույթի և արվեստի գործիչներ, գրողներ և մշակութաբաններ:

Ճաղերի ետևում գտնվող կանանց ձայները լսելի են. Տեղի է ունեցել «Հը՞, մամ, ինչպե՞ս է դրախտում» գրքի շնորհանդեսը

«Վերաինտեգրման ուղիներ. հզորացում սոցիալական ներառման միջոցով՝ հանուն կայուն ապագայի» դրամաշնորհային ծրագիր

2025 թվականի հուլիս-նոյեմբեր ամիսներին Կազմակերպությունը բրիտանական the BEARR հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ իրականացրել է «Վերաինտեգրման ուղիներ. հզորացում սոցիալական ներառման միջոցով՝ հանուն կայուն ապագայի» դրամաշնորհային ծրագիրը, որի նպատակն էր աջակցել Պրոբացիայի ծառայության Շիրակի մարզային մարմնում հաշվառված շահառուներին՝ յուրացնելու այնպիսի անձնական, սոցիալական, իրավական և գործնական հմտություններ, որոնք անհրաժեշտ են հասարակությունում ինքնուրույն ապրելու, համայնքում պատասխանատու վարքագիծ դրսևորելու, աշխատանք գտնելու, շրջապատում դրական կապեր հաստատելու, իրենց իրավունքներն իրացնելու և դժվարությունները հաղթահարելու համար: Կազմակերպվել է «Սոցիալական հմտությունների զարգացում և բարեկեցություն», «Անհատական աճ և զբաղվածության հմտություններ», «Իրազեկում և իրավունքների պաշտպանություն» և «Սոցիալական վերաինտեգրման հմտություններ» թեմաներով 16 դասընթաց, որոնց հաճախել է 40 մասնակից, ներառյալ 36 շահառու և նրանց ընտանիքի 4 անդամ:

Քանի որ ծրագրի հիմնական նպատակը պրոբացիայի ծառայության շահառուների սոցիալական ինտեգրմանը նպաստելն էր, հանդիպումներից մեկն անցկացվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի Շիրակի մարզային ստորաբաժանումում: Մասնակիցներին ներկայացվել են ՄԻՊ գործառույթները, քաղաքացիների դիմելու ընթացակարգերը, ինչպես նաև Պաշտպանի միջամտության և պաշտպանության մեխանիզմները: Քննարկվել են նաև շահառուների քրեադատավարական կարգավիճակով պայմանավորված իրավունքներն ու պարտականությունները, որոնք սահմանվում են դատարանի կողմից: Շահառուները բարձրացրել են իրենց հուզող մի շարք հարցեր՝ կապված դատվածության իրավական հետևանքների, սահմանափակումների, դատվածության մարման կամ հանման ժամկետների հետ: Մասնակիցները ստացել են նաև մանրամասն պարզաբանումներ իրենց իրավունքների իրացման, այդ համատեքստում համապատասխան պետական կամ այլ մարմինների դիմելու ընթացակարգերի և ժամկետների վերաբերյալ:

«Վերաինտեգրման ուղիներ. հզորացում սոցիալական ներառման միջոցով՝ հանուն կայուն ապագայի» դրամաշնորհային ծրագիր

Դասընթացներից մյուսը կազմակերպվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայության Գյումրու տարածքային կենտրոնի ռեսուրս դահլիճում: Ներկայացվել են գործող պետական ծրագրերը, դրանց դիմելու ընթացակարգերը և պայմանները: Մասնակիցներին ներկայացվել են նաև զբաղվածության ծրագրերում նախատեսվող փոփոխությունները և դրանց հնարավոր ընդլայնումը՝ սկսած 2026 թվականից: Շահառուներն իրենց հերթին բարձրաձայնել են մի շարք կարևոր խնդիրների մասին, որոնց վերաբերյալ տրվել են մանրամասն պարզաբանումներ և կատարվել են համապատասխան ուղղորդումներ: Քննարկումն ընդգծել է իրազեկվածության ցածր մակարդակի հարցը: Այդ համատեքստում շահառուներին առաջարկվել է լինել իրենց համայնքի ակտիվ բնակիչներ և պարբերաբար դիմել համայնքային կառույցներին՝ տեղեկանալու օրենքներում և ընթացակարգերում տեղի ունեցող փոփոխությունների մասին: Այսպիսով, ծրագիրն ամրապնդել է պրոբացիայի ծառայության շահառուների և համայնքի միջև կապը, խորացրել համագործակցությունը մարզային կառույցների միջև՝ վերահաստատելով այն համոզմունքը, որ նշված խոցելի խմբի արդյունավետ սոցիալական ինտեգրումը հնարավոր է միայն համապատասխան մարմինների միջև կառուցողական համագործակցության և բաց երկխոսության միջոցով:

«Վերաինտեգրման ուղիներ. հզորացում սոցիալական ներառման միջոցով՝ հանուն կայուն ապագայի» դրամաշնորհային ծրագիր

Ծրագրի իրականացման ընթացքում ընթացիկ և ամփոփիչ հանդիպումներ են տեղի ունեցել Պրոբացիայի ծառայության Շիրակի մարզային մարմնի աշխատակազմի հետ՝ քննարկելու համար ծրագրի առաջընթացը և այն հարցերը, որոնք ծագում են իրագործման ընթացքում:

Ծրագիրն ամփոփվել է «Պրոբացիայի ծառայության շահառուների վերաինտեգրումը. մարտահրավերներ և հեռանկարներ» խորագրով կոնֆերանսով, որի նպատակն էր ամփոփել ծրագրի արդյունքները և ձեռքբերումները, ներկայացնել պրոբացիայի ծառայության շահառուների վերասոցիալականացման բարելավման վերաբերյալ առաջարկություններ, ինչպես նաև խթանել մարզային պետական ու մշակութային կառույցների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև համագործակցութունն ու կառուցողական երկխոսությունը:

Կոնֆերանսին մասնակցել են ներկայացուցիչներ մարզային կառույցներից, պետական գերատսեչությունների մարզային ներկայացուցչություններից, մարզում գործող երիտասարդական, հասարակական և բուհական կառույցներից: Յուրաքանչյուր կառույց ներկայացրել է այն ծրագրերը, որոնք առկա են համայնքում և որոնցից կարող են օգտվել նաև պրոբացիայի ծառայության շահառուները: Քննարկվել են նաև այն խնդիրները, որոնք խոչընդոտում են պրոբացիայի ծառայության շահառուների սոցիալական ինտեգրմանը: Հնչեցված հարցերի վերաբերյալ Պրոբացիայի ծառայության պաշտոնյաների կողմից տրվել են պարզաբանումներ, նաև պատրաստակամություն է հայտնվել այդ խնդիրները հետագա քննարկման առարկա դարձնել՝ արդյունավետ լուծումներ գտնելու նպատակով:

«Պրոբացիայի ծառայության շահառուների վերաինտեգրումը. մարտահրավերներ և հեռանկարներ». Կոնֆերանսի ամփոփում



«Կառուցելով գենդերազգայուն քրեակատարողական համակարգ Հայաստանում» դրամաշնորհային ծրագիր

Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2024-2026 թվականների ռազմավարությամբ նախատեսված է, որ կալանավորված և ազատազրկման դատապարտված կանանց հետ աշխատող ողջ անձնակազմը պետք է պարտադիր վերապատրաստում անցնի՝ կապված գենդերային հատուկ կարիքների և ազատազրկված կանանց իրավունքների պաշտպանության հետ: Նախատեսված է նաև «Աբովյան» ՔԿՀ-ի գործունեությունը և առօրյա կարգավորող ներքին կանոնները համապատասխանեցնել կանանց ազատազրկման նկատմամբ գենդերազգայուն մոտեցումների պահանջներին՝ համաձայն Բանգկոկյան կանոնների: Սա, իր հերթին, ենթադրում է դրույթների սահմանում գենդերազգայուն մոտեցումների վերաբերյալ՝ կապված կանանց խուզարկությունների (մերկացմամբ կամ մարմնի խոռոչների զննությամբ) անցկացման և մարդու արժանապատվության չարաշահումներից պաշտպանական երաշխիքների ամրագրման հետ:

Այս համատեքստում հարկ է նշել, որ Կազմակերպության կողմից Վրաստանում Նորվեգիայի Թագավորության դեսպանատան ֆինանսական աջակցությամբ 2025-2026թթ. իրականացվող «Կառուցելով գենդերազգայուն քրեակատարողական համակարգ Հայաստանում» ծրագիրն առաջին համակարգված փորձն է Հայաստանում՝ ուղղված ռազմավարական վերոնշյալ նպատակների իրագործմանը:

«Կառուցելով գենդերազգայուն քրեակատարողական համակարգ Հայաստանում» դրամաշնորհային ծրագիր

Ծրագրի շրջանակներում 2025 թվականի սեպտեմբերի 24-26-ին և հոկտեմբեր 27-29-ին կազմակերպվել է 2 եռօրյա դասընթաց: Քանի որ ծրագիրը կարևորում է ազատազրկված կանանց հետ աշխատող մասնագիտական տարբեր խմբերի միջև առկա կարծրացած շփումների հաղթահարման անհրաժեշտությունը, այդ պատճառով դրանք կազմակերպվել են միջմասնագիտական ձևաչափով՝ ներգրավելով կանանց հետ աշխատող բոլոր մասնագիտական խմբերին:

Առաջին դասընթացին մասնակցել են Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի անվտանգության ապահովման բաժնի 1, «Աբովյան» ՔԿՀ-ի սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների, անվտանգության, պահպանության և տնտեսական ապահովման բաժինների և օպերատիվ վարչության 8 ծառայողներ և աշխատակիցներ, ինչպես նաև «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի «Աբովյան» ՔԿՀ-ի ստորաբաժանման 2 մասնագետ: Երկրորդ դասընթացին մասնակցել են «Աբովյան» ՔԿՀ-ի սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների, անվտանգության ապահովման բաժինների և օպերատիվ վարչության 7 ծառայողներ և աշխատակիցներ, ինչպես նաև «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի «Աբովյան» ՔԿՀ-ի ստորաբաժանման 2 մասնագետ:

Դասընթացները հասցեագրել են նաև գենդերազգայուն մոտեցումների և սկզբունքների ներառումն ազատազրկված տղամարդկանց այցելող կանանց հետ տարվող աշխատանքներում՝ կապված տեսակցությունների կազմակերպման, զննության և խուզարկության անցկացման, հանձնուքների ընդունման և այլ պատասխանատու գործընթացների հետ: Այդ պատճառով ներգրավվել են նաև «Արմավիր», «Դատապարտյալների հիվանդանոց», «Նուբարաշեն», «Սևան» և «Վարդաշեն» ՔԿՀ-ների սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների, անվտանգության ապահովման բաժինների 16 ծառայողներ և աշխատակիցներ, որոնց գործառույթներն առնչվում են ազատազրկված տղամարդկանց այցելող կանանց հետ տարվող աշխատանքներին:

Ամփոփել ենք «Ազատազրկված կանանց հետ տարվող աշխատանքներում գենդերազգայուն մոտեցումների ներառում և կիրառում» թեմայով դասընթացը

Ամփոփել ենք «Կառուցելով գենդերազգայուն քրեակատարողական համակարգ Հայաստանում» դրմաշնորհային ծրագրով նախատեսված երկրորդ դասընթացը

Համագործակցության ամրապնդում լրատվամիջոցների հետ

Հաշվետու տարում Կազմակերպությունը 2 քննարկում է նախաձեռնել Մեդիա կենտրոնի հետ համագործակցությամբ, 3 քննարկում՝ Հանրային ռադիոյի «Դպրություն» հաղորդաշարի շրջանակներում: Կազմակերպության նախագահ Նարե Հովհաննիսյանը 2 անգամ հյուրընկալվել է Հանրային ռադիոյի «Ձեր փաստաբանը» հաղորդաշարին, 1 անգամ՝ Sputnik Armenia ռադիոյին, 1 անգամ՝ Ամփոփ մեդիային, 1 անգամ՝ Ռադիո Շանթի Երեկոյան ծրագրին:

- «Ազատազրկվածներն ու արտաքին աշխարհը»
- «Որքանո՞վ են մարդակենտրոն ՔԿՀ-ները Հայաստանում»
- «Ոչ ֆորմալ կրթություն ճաղերից այն կողմ. նպատակներ, կարիքներ, սոցիալիզացիա»
- «Իրավագիտակցություն և իրավահարաբերություններ. կրթությունը ՔԿՀ-ներում»
- «Երկրորդ հնարավորություն. կրթության ազդեցությունը պրոբացիայի գործընթացում»
- «Ազատազրկված անձանց իրավունքները և վերասոցիալականացումը»
- «Ազատազրկված կանանց իրավունքները ՀՀ ՔԿՀ-ներում»
- Նարե Հովհաննիսյանի հարցազրույցը Sputnik Արմենիայի հետ
- Ի՞նչ է հարկավոր շտկել դատապարտյալների վերասոցիալականացման ծրագրերում
- Ռադիո Շանթ. Երեկոյան ծրագիր

Համագործակցության ամրապնդում լրատվամիջոցների հետ

Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտներում Կազմակերպության ծավալած գործունեությունը լուսաբանել են Ազատություն ռադիոկայանը, Factor TV-ն, Արմաթ մեդիան, Asparez.am կայքը, Շանթ Գյումրի ՀԸ-ն:

- Կալանքը՝ պատիժ. բանտերում կալանավորների թիվն աճում է
- «Կանանց գաղութում կտրուկ աճել է թմրանյութերի գործով անցնողների թիվը»
- «Բանտ» ու «լավ» բառերը՝ հոմանիշներ. ինչ են պատմում ազատազրկված կանայք»
- «Հը՞, մամ, ինչպե՞ս է դրախտում». ազատազրկված կանանց պատմությունները
- «Դու մենակ չես». Պրոբացիայի ծառայության շահառուների սոցիալականացման ուղին
- «Պատժողական քաղաքականությունից դեպի վերականգնողական արդարադատություն»
- «Ամփոփվել է պրոբացիայի ծառայության շահառուների ինտեգրմանն ուղղված ծրագիրը»

Կազմակերպության նախագահ Նարե Հովհաննիսյանի մասնակցությամբ 8 ռեպորտաժ է պատրաստվել.

- «Ազատազրկվածներն ու արտաքին աշխարհը. Քրեակատարողական օրենսգրքի բացերը»
- «8 հոգի՝ փոքր խցում. ինչ վիճակ է «Նուբարաշեն» ՔԿՀ-ի ճաղերից այն կողմ»
- Դժվար կյանքը ճաղերի հետևում. Մահերի թիվն ավելանում է
- ՔԿՀ ներում հոգեկան խնդիրներ ունեցողները գրեթե անտեսված են
- Քրեական աշխարհի դեմ պայքարի ճիշտն ու սխալը
- Միջատներ և կրծողներ՝ կալանավայրում. ի՞նչ է կատարվում
- Մինչև տարեվերջ կփակե՞ն Դատապարտյալների հիվանդանոցը
- Ինքնասպանությունների կանխարգելումը ՔԿՀ-ներում

«Իրավական նախաձեռնությունների կենտրոն»

Իրավապաշտպան հասարակական կազմակերպություն

+374 55 155 300

nare@prisoninitiatives.am

www.prisoninitiatives.am

https://www.facebook.com/legalinitiativesngo/

https://www.youtube.com/@prison-initiatives-2022